UNIVERSITY CHILDREN'S HOSPITAL ZURICH

ARABKIR Hospital
Yerevan / Armenia

DIRECT AID ASSOCIATION
public charity organization

Պաշտոնական համագործակցության ծրագիր

# Դասընթաց «Հատուկ կրթություն»

## Մայիսի 4, 2019, Երևան, ՀՀ

---

Պրոֆ. Դր. Ջուդիթ Հոլլենվեգեր, Ցյուրիխի մանկավարժական համալսարան
Քրիստինե Վալցեր, Ցյուրիխի համալսարանական մանկական հիվանդանոց

The hospital of the
Eleonore Foundation

UNIVERSITY CHILDREN'S HOSPITAL ZURICH

ARABKIR Hospital
Yerevan / Armenia

DIRECT AID ASSOCIATION
public charity organization

Պաշտոնական համագործակցության ծրագիր

# Ուսումնական ծրագրից դեպի անհատականացված կրթություն

## Ֆունկցիաների Միջազգային Դասակարգումը /ՖՄԴ/ որպես ընդհանուր լեզու ուսումնառության և ուսուցման համատեքստում

Ջուդիթ Հոլլենվեգեր Հասկելլ
Հատուկ կրթության դասընթաց
Երևան, մայիսի 4, 2019

# ՖՄԴ-ն կրթության մեջ – Ի՞նչ է պետք հաշվի առնել, երբ ՖՄԴ-ն օգտագործում ենք կրթական պլանավորման մեջ

| ՖՄԴ-ն բժշկական համատեքստում | Կրթական ծրագիրը կրթության համատեքստում |
| --- | --- |
| Գործառույթ – Համատեքստ փոխազդեցություն | Անձ – Համակարգ փոխազդեցություն |
| Ուշադրության կենտրոնացում անհատի վրա | Ուշադրության կենտրոնացում փոխազդեցության/հաղորդակցման վրա |
| Վերահաստատելու գործառույթը | Ֆունկցիայի զարգացում և ձևափոխում |
| Նախապես ընտրված ենթախումբ | Որոշակի տարիքի ամբողջական խումբ |
| Հիվանդությունների ուղեցույցների որոշումների կայացում | Առողջության ուղեցույցների որոշումների կայացում |
| Ֆունկցիան միջամտության մեկնարկային կետն է | Կրթական նպատակները միջամտության մեկնարկային կետն են |

# ՖՄԴ Մոդելն ընդլայնվել է մասնակցությունն ապահովող նպատակներն ու միջամտությունները սահմանելու համար



# Ուսումնասիրելով կրթական ծրագրի լանդշաֆտը

Կրթական ծրագիրը որպես հմտությունների նկարագրություն - «Պարզեցում»

– Հարմարեցում, պարզեցում, ուսումնական ծրագրի բովանդակային փոփոխություններ

– Զարգացման տեսանկյունից ավելի վաղ կամ ավելի տարրական հմտություններ, գործունեություն կամ առաջադրանքներ

Ուսումնական ծրագիրը որպես «Մշակույթի ընդունում»/օր.՝ դասարանում օրվա ռեժիմ՞ Ի՞նչ պետք է իմանաս կամ ինչ փորձ պետք է ունենաս հասարակության մասը լինելու համար – «Կոնտեքստուալիզացիա»

– Ուշադրության կենտրոնացում ավելի շատ փորձի, քան մտքի վրա

– Գիտելիքների կիրառումն ավելի շատ առօրյա իրավիճակներում, քան մաթեմատիկայի դասի ժամանակ

– Խնդիրների լուծում երեխայի «մշակութային տանը» (որտեղ երեխան իրեն ամենահարմարավետն է զգում կամ ինչպես տանը)

– Բովանդակության հարմարեցում, երեխային հասանելի են թեմաներն ու «սովորելու ձևերի» մասին գիտելիքը (օր՝ անմիջական զգայաշարժողական փորձը)

Ուսումնական ծրագիրը մեծահասակ կյանք մտնելու ուղի՝ Ի՞նչ պետք է դառնաս ունակ և անկախ լինելու համար – «Անհատականացում»

– Ինքնակառավարման փորձը հմտություններն ընդլայնելու միջոցով

– Ստեղծել իմաստալից իրավիճակներ ինքնակառավարման կարողությունը խթանելու համար


Անհատականացում
Վերաբեր-
վում է ընդու-
նակությանը/
կարողու-
թյանը
Ուսումնական
ծրագրի
առարկա
Վերաբերվում
է փործին
Վերաբերվում
է հմտությանը
Կոնտեքստուալիզացիա
Պարզեցում

# Կարո՞ղ եք գտնել այս երեք սկզբունքները հետևյալ տեսանյութում:



# ՖՄԴ-ն կրթության համատեքստում

Մարմնի գործառույթների սահմանափակումները, առողջական խնդիրները, խանգարումները կարևոր են միայն շրջակա միջավայրի հարմարեցումների, օժանդակ սարքերի օգտագործման, ուսումնական ռազմավարությունների փոփոխությունների համար: Նպատակն է կրճատել ֆունկցիոնալ սահմանափակումների ազդեցությունն ուսման և կրթության վրա:

→ Կրթական նպատակները չեն առաջնորդվում (հիմնականում) ֆունկցիոնալ սահմանափակումներով, սակայն վերջիններս կարող են ազդեցություն ունենալ այն բանի վրա, թե որ նպատակներն են հասանելի

ՖՄԴ–ի գործունեությունը ցույց է տալիս, թե ինչ կարող է/չի կարող անել երեխան ֆունկցիոնալ տեսանկյունից: Այն, ինչ երեխան անում է ներկա միջավայրում (= մասնակցություն) հանդիսանում է հմտությունների զարգացման մեկնարկային կետ:

→ «Մասնակցությունը» ներառում է սուբյեկտիվ և մշակութին բնորոշ առանձնահատկություններ

Տաղանդներն ու ներուժը կապված են անձնական հետաքրքրությունների, նախասիրությունների, հաղթահարման ռազմավարությունների և մոտիվացիայի հետ: Սա վերաբերում է այն բանին, թե ինչ երեխան դեռ չի կարող անել, «զարգացման մոտալուտ գոտում» հնարավորությունների զարգացմանը: Սրանք ՖՄԴ- ում անուղղակիորեն ընդգրկված են որպես «անձնական գործոններ»:

→ Մարդը կրթության կենտրոնում է – ՀԱԻԿ /Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիա/ հոդված 24. «Անհատականության, տաղանդների և ստեղծագործ ունակության զարգացում» և կրթության հիմքը:

# Ի՞նչ է նշանակում «կյանքի իրավիճակ» կամ «ունեցած/ապրած փորձ» կրթության մեջ

Գործունեություն՝ անհատի կողմից առաջադրանքի կամ գործողության կատարում

Մասնակցություն՝ ներգրավվածություն կյանքի իրավիճակի մեջ

Ներգրավվածություն կյանքի կարևոր տիրույթներում՝ կյանքի բնորոշ մի շարք իրավիճակներ, որոնք ունեն բարդ հաջորդականություն կամ առաջադրանքների կամ գործողությունների խմբավորում:

**Ի՞նչն է ամենակարևորը կրթության համար:**







# «Մասնակցությունը» որպես ներգրավվածություն կյանքի իրավիճակում



# Կարո՞ղ եք նկարագրել այս իրավիճակը՝ օգտագործելով մոդելը:



UNIVERSITY CHILDREN'S HOSPITAL ZURICH

ARABKIR Hospital
Yerevan / Armenia

DIRECT AID ASSOCIATION
public charity organization

Պաշտոնական համագործակցության ծրագիր

# ԱՈՒՊ-ի նպատակների օրինակներ

---

Քրիստինե Վալցեր
Հատուկ կրթության դասընթաց
Երևան, մայիսի 4, 2019

# Ներկայացնում ենք մի երիտասարդ կնոջ ՖՄԴ-ի համատեքստում



# Ներկայացնում ենք Թ.-ին 1

16 տարեկան, գրավիչ օրիորդ, երկար շեկ մազերով, շագանակագույն աչքերով, նորաձև հագնված

**Առողջական վիճակ / մարմնի կառուցվածքը և ֆունկցիաները.**

Սպինա Բիֆիդա /ողնուղեղային ճողվածք, расщелина позвоночника/ => անձ, ով ունի մտավոր հաշմանդամություն, անվասայլակ, արտազատման խնդիրներ

Տարիքին համապատասխան ֆիզիկական զարգացում, սեռական հասունություն

**Գործունեություն.**

Սովորաբար՝ կարող է ինքնուրույն տեղաշարժվել իր անվասայլակով, աջակցության կարիք ունի ինքնակառավարման հարցերում

Ներկայումս՝ վիրահատությունից հետո գտնվում է հիվանդանոցում, կարճ ժամանակ անկողնում, հետո անվասայլակում

**Մասնակցություն.**

Սովորաբար՝ մարդամոտ, շփվող, կարողանում է արտահայտել իր կարիքները

Ներկայումս՝ մասնակցում է հիվանդանոցային դպրոցի ձեռքի աշխատանքի և դպրոցի դասերին

# Ներկայացնում ենք Թ-ին. 2

**Արտաքին և միջավայրային գործոններ.**

- Ապրել է տանը մինչև 10 տարեկանը, երբ մայրը մահացել է
- Այդ ժամանակվանից ի վեր հաստատությունում է (հատուկ կարիքներ ունեցող երեխաների գիշերօթիկ դպրոց, հատուկ կարիքներ ունեցող մեծահասակների արհեստանոց և տուն)
- Հայրը. նոր զուգընկեր (ում Թ.-ն չի հետաքրքրում)
- Թ.-ն տարեկան ընդամենը մի քանի շաբաթ-կիրակի է անց կացնում հոր նոր տանը
- Շատ ավելի մեծ եղբայր, գրեթե կապ չկա
- Չկան այլ մոտ բարեկամներ
- Կարեկից/հոգատար խնամակալներ հաստատությունում

# Ներկայացնում ենք Թ.-ին 3

**Անձնական գործոններ.**

- լայնախոհ
- մարդամոտ, շփվող => մտավոր ունակությունը հաճախ գերագնահատված է
- փնտրում է ֆիզիկական մտերմություն
- պատրաստ է հարաբերությունների
- Հետաքրքրվում է սիրո պատմություններով
- Ինձ ասել է, որ նոր ընկեր ունի (28 տարեկան)???
- Ասել է բուժքրոջը, որ մեր նոր տղամարդ ձեռքի աշխատանքի ուսուցիչը համբուրել է իրեն (իհարկե ճշմարտություն չէ, այլ նրա ցանկությունը):

# Նպատակ. Լեզու սովորելն ու «ընթերցանությունը»

Թ.-ն սիրում է սիրո պատմություններ:
Նա կարող է կարդալ բառեր, բայց ոչ երկար տեքստեր.

⇒ լավ օրինակ են պարզ կոմիքսները

⇒ ինչպես հաղթահարել ֆիզիկական սահմանափակումները

⇒ Նկարներով պատմություններ.

- գտնել ճիշտ հերթականությունը
- պատմել պատմությունը

⇒ մարմնի բոլոր մասերի բառապաշարը



## Նպատակ. Հարաբերություններում մտերիմ լինելու և որոշակի հեռավորության վերաբերյալ իրազեկում / Սեռական բռնության/ոտնձգության կանխում/

Քննարկում ֆիզիկական մտերմության, ցանկությունների, իրականության, անցանկալի հպումների և «ոչ» ասելու վերաբերյալ

Մարմնի քարտեզներ.



- սահմանեք մարդկանց և գույներ տվեք.

  հայր, խորթ մայր, ուսուցիչ,

  խնամակալ, ընկեր, բժիշկ...

  => ներկեք մարմնի մասերը, որոնց կարող են կպնել նշված մարդիկ

# Նպատակ. Մտածել սիրո և նրա համատեքստի մասին




- ասել «դադարեցրու»
/դերային խաղ/
- լավ և վատ գաղտնիքներ
- ցանկություններ, ֆանտազիաներ
և իրականություն



Պարզել, ինչ ի նկատի ունի, երբ ասում է.
«Ձեռքի աշխատանքի ուսուցիչը համբուրել է ինձ:»

-> հետևանքներ
-> ցանկություն և իրականություն
-> պարծենալ

# Նպատակ. Երկու պատմությունների եզրակացություն



Պատմել պատմություն, որը լավ է վերջանում

Պատմել պատմություն, որը լավ չի վերջանում

=> Պարզել, թե ինչն է լավ
և ինչը լավ չէ

UNIVERSITY CHILDREN'S HOSPITAL ZURICH

ARABKIR Hospital
Yerevan / Armenia

DIRECT AID ASSOCIATION
public charity organization

Պաշտոնական համագործակցության ծրագիր

# Ուսումնական ծրագրից դեպի անհատականացված կրթություն

## Ուսումնառության համընդհանուր դիզայն /Universal Design for Learning/

---

Ջուդիթ Հոլլենվեգեր Հասկել

Հատուկ կրթության դասընթաց

Երևան, մայիսի 4, 2019

The hospital of the
Eleonore Foundation

# Որոշել ուսումնական ծրագրի տեղը – հաշվի են առնվում ֆունկցիոնալ սահմանափակումները, բայց հիմնական դեր չեն կատարում

**ԻՆՉՈ՞Ւ**
Անձնական հզորացում

*Ուսումնական միջավայրեր*

*Հմտություններ Ակնկալիքներ և Կրթական Նպատակներ*




**ՈՐՏԵՂ**
Ներգրավվածու-թյուն կյանքի իրավիճակներում

*Մեթոդական Մոտեցումներ և Աջակցության Ռազմավարություններ*

**ԻՆՉՊԵ՞Ս**
Գործողություններ իրականացնելով


Գործիքներ, Ռազմավարու- թյուններ, Մշակույթ
Ինչպե՞ս
Երեխայի առանձնահատ- կությունները
Ո՞վ
Ի՞նչ
Առարկայական ոլորտի գիտելիքներ
Անհատականացում
Հզորացում և կարողություն
Ինչո՞ւ
Պարզեցում
Ապրելու և սովորելու միջավայր
Ո՞րտեղ
Կոնտեքստուալիզացիա

# Կիրառել ուսուցման համընդհանուր դիզայնը

## Universal Design for Learning Guidelines

GO TO THE UDL GUIDELINES

AFFECTIVE NETWORKS:
THE **WHY** OF LEARNING



### Engagement

For purposeful, motivated learners, stimulate interest and motivation for learning.

RECOGNITION NETWORKS:
THE **WHAT** OF LEARNING



### Representation

For resourceful, knowledgeable learners, present information and content in different ways.

STRATEGIC NETWORKS:
THE **HOW** OF LEARNING



### Action & Expression

For strategic, goal-directed learners, differentiate the ways that students can express what they know.

Սովորեք հիմունքները հետևյալ կայքերում http://www.udlcenter.org և http://www.cast.org/our-work/about-udl.html

# Ուսումնառության համընդհանուր դիզայն -Ուղեցույց

Հուզական ցանցեր.
ՍՈՎՈՐԵԼՈՒ «ԽԹՆԵԼՈՒ»-ն

**Ներգրավվածություն**

Նպատակասլաց, շահագրգռված սովորողների համար խթանել հետաքրքրությունը և սովորելու շահագրգռվածությունը:

Ճանաչողական ցանցեր.
ՍՈՎՈՐԵԼՈՒ «ԻՆՉ»-ը

**Ներկայացում**

Հնարամիտ, բանիմաց սովորողների համար ներկայացնել ինֆորմացիան և բովանդակությունը տարբեր ձևերով:

Ռազմավարական ցանցեր.
ՍՈՎՈՐԵԼՈՒ «ԻՆՉՊԵՍ»-ը

**Գործողություն և արտահայտում**

Նպատակային սովորողների համար զանազանել աշակերտների իրենց գիտելիքն արտահայտելու ձևերը:


Գործողություն և արտահայտում
Սովորելու «Ի՞ՆՉՊԵՍ»-ը
Ներկայացում
Ներգրավվա-ծություն
Ո՞վ Սուբյեկտ
Սովորելու «Ի՞ՆՉ»-ը
Սովորելու «Ի՞ՆՉՈՒ»-ն
Ո՞ՐՏԵՂ Համա-տեքստ